59. ՊԱՂԴԸԴՈՒ ԽԱԼԻՖԵՆ

Աֆանդրմ, Պաղդրգու խալիֆեն թավտիր խըլըղ մտավ, հ՝ելավ հեծավ զուր ձին, հ՝ընկավ աշխար։

Շատ օլըրտավ։ Օրըմ էկավ մեկ կոնի մը հ՝ըռաստ էկավ, հազար կոնից էվել կէղներ էդ տեղ, էդ կոն թաք էր, էկավ էդ կոն հ՝իշավ։

Էկավ էդ կոնի դուռ կանավ, աչքն առավ էդ կոնի տիրու կնիկ, խելքն դլխեն գնաց։ Ասեց. «Ահտ ու խըրար էղնի իմ հոգուն, յամ զէդա կնիկ կտանեմ էրթամ, յամ զիմ ջան թալաֆ կէնիմ, կէլնիմ կէրթամ»։

Հ՝իշավ հ՝ոդի, կերավ, խմեց, պառկավ քնավ։ Հ՝իրկվան մոտ էր, հ՝ելավ հեծավ զուր ձին ու գնաց մեշի մեշ հ՝իշավ։ Էդ տեխրանք լե մեշե մը կեր։ Գնաց մեշի մեշ, զուր ձին կապեց, քաշեց զուր կուլապ գլուխ ու պառկավ, չուրի մթնեց, քնավ։

Էդ կոնի տեր լե էլաղասի էր, ուր կնկա հ՝ապով ջոկվեր է, էկի էդ տեխ, զուր կոն զարկի։ Հ՝իրկուն օր կէղներ, կկապեր զուր ճագեր, կաներ հար լուս ուր կոնի դուռ, լուսուն օր կէղներ, կէրթեր կհարձկեր ու կիգեր պառկեր քներ։ Էդ հրմալով հար լուսուն զուր կոն կպահեր։

Աֆանդրմ, դառնանք խալիֆի վրեն։ Խալիֆեն, հ՝իրկուն օր էղավ, զուր ձին թողեց էդ տեխ կապուկ։ Մալումե Պաղդրգու խալիֆեն փեշաշորիկ էկավ օր զէգ մարդու կնիկ գողնա, առնե էրթա։

Կոնի տեր լե զուր ճագեր կապեր էր, ուր կոնի բոլոր կօլըրտեր։ Տեսավ օր մարդըմ փեշաշորիկ էնդիեն կիգա։ Քշեց, գնաց հ՝առեջ, ի՞նչ ս՝ըքե, տեսնա աղեկ է։ Երևելի մարդըմ փեշաշորիկ զփեշեր քշտեր է, դարկի կշտներ ու էնդիեն կիգա։ Հարցուց.—Դու ի՞նչ մարդ իս։

Ասեց.— Վալայի, ես դող իմ։

— Ինչի՞ դող իս։

Ասեց.—Վալայի, ես էդա կոնի տիրու կնկա գողն եմ, էկեր իմ յամ զիմ ջան թալաֆ էնեմ, յամ զէդա կոնի տիրու կնիկ առնեմ, էրթամ։

Կոնի տեր ասեց.— Մատամ օր հրմալ է, կանի, ես չրմ թողի դու նեղենաս, ես կէրթամ գողնամ, բերեմ իտամ քի, առ ու գնա։

— Զէ, չէ։

— Հա, վալա։

— Օր դու հրմալ մարդկութեն մ՝էնիս, շատ շնորհակալ կէդնիմ։

Կոնի տեր գնաց, զկնիկն բերելու։ Խալիֆեն լե ուր ձիուն բերեց։

Էլաղասին գնաց, ասեց.—Կնիկ։

Կնիկն ասեց.— Ի՞նչ է, մարդ։

Ասեց.—Հ՝ելի, հագի զքու շորեր։

Կնիկ հ՝ելավ հագավ զուր շորեր։

Բրռնեց զկնկա ձեռք, բերեց։ Տեսավ օր խալիֆեն էդ տեխ կանուկ է։ Գրկեց, վերցուց դրեց խալիֆի թարք։

Ասեց.— Դը գնա, աստված քու հետ էղնի, օղուր էղնի։

Վալայի, խալիֆեն զձիու գլուխ թորկեց։ Շատ քիչ, քշեց զուր ձին, կնիկ սազեց լալ։

Ասեց.—Կնիկ, հ՝որի՞ կիլաս, ես Պաղդրդու խալիֆեն իմ, աշխարկի իշխողն իմ, հ՝որի՞ կիլաս, զքզիկ կտանեմ, պուտրմ ծաղկի պես կպահիմ։

Կնիկն ասեց.— Ես զէն չէ, կիլամ։

— Ըպա ի՞նչ է կիլաս։

— Կիլամ զէն, օր մարդրմ զուր խերաթ իմա՞լ ուր ձեռքով կվերու իտա խալղին, առնե էրթա։

— Իմա՞լ,— ասեց,— զուր խերաթ։

— Ըպա,— ասեց,— էդ մարդ օր զիս տվեց քզիկ, էդի իմ էրիկն է։

— Զէ, չէ։

— Հա, վալայի։

Հրմա հոնկուց խալիֆեն զձիու գլուխ դառցուց, քշեց էկավ կոնի դուռ հ՝իջավ։ Կանչեց զէլաղասին, հ՝իշուց զկնիկ ձիուց։

Ասեց.—Մարդ, էս տշխարկի մեջ էդ հրմլա բան չենք տեսի, օր դու զէդ բան էրիր, ես Պաղդրդու խալիֆեն ենք, աստծուց կխնդրենք հ՝ոկցա քանի մը տարի սորա դու հրմալ էղներ ավուր հացի կարոտ, քշեր հ՝իգեր իմ մոտ, քզիկ աղեկութեն մը էնեք, բալքիմ հ՝ելնենք էդա քու մեղաց տկեն։ Մարդ հեչ ուր ձեռքով զուր նամուս ուրիշին թասլիմ կէնե՞։

Ասեց ու հեծավ զուր ձին, զուր բար տվեց գնաց։

Խալիֆեն թող էրթա ուր էրկիր, մենք դառնանք վըր էլաղասուն։

Աֆանդըմ, թե էրկու տարի հ'ընցավ թե իրեկ, էլաղասին հըմալ էղավ, ավուր հացի կարոտ, հացըմ դներ են ծոցը, կիգեր մեկել ծոցեն պատեր։

Կըտրատեց զուր կոն, կտորըմ ինկ հագավ, մեկ լե ուր կնիկ, մեկ ջորի մանցեր էր, հեսցուց զուր էրկու էրեխեն վրեն, բար տվեց Պաղդադ ու գնաց։ Շատ, քիչ գնաց, օրըմ հ'իրկուն բաղի մը հ'ըռաստ էկավ։ Մըթնեց, մտավ բաղի մեջ, բաղվանչուց խնդրեց ասեց.—Բաղվանչի, ես իմ ու էրկու ճիժ, էկանք ջենլըկ չհասանք, մանցինք էդա տեխ, հիվի կէնիմ քու օտնեն օր տեխըմ իտաս, կապիմ զիմ ջորին, ես ու իմ կնիկ, ճիժեր սրթըրվինք, հ'ելնենք լուսուն էրթանք։

Շատ խնդրեց, բաղվանչին ասեց.—Գնա առ ու էկո։

Քաշեց զուր ջորին ներս, կապեց, զուր ճըժկըներ ծըվարեց, ինկ ու ուր կնիկ նստան հ'իրարու խեչ, շուրի լուսցավ։

Պաղդրդու խալիֆի սովորութենն է՝ էն ատեն օր էկեր էր էդ մարդուն հ'ըռաստ ու դառցեր էր, էկի ուր տեխ նստի, լուսուն կէլներ նստեր ուր քոշկի փանջարեն, զդուրպին կդներ աչքին ու կիշքեր հար հ'իրկուն զէդոնց ճամբախ բաքլանմիշ կէներ։

Աղոթրնին հ'ելավ զդուրպին դրեց աչքին, աչքեց, տեսավ օր մալըմ ու իրեկ-չորս ջան կան ուր բաղի մեջ։

Կանչեց մեկըմ, ասեց.—Գնա, գնա թախիխ էրե, տեսնանք էդ ի՞նչ մարդ է, հ'ուսաե՞ն կիգա, հ'ու՞ր կէրթա։

Մարդ հ'իշավ էկավ բաղի մեջ։ Տեսավ օր մարդըմ ու էրկու տղա ու ուր կնիկ։ Հարցուց.— Դու հ'ուսդե՞ն իս, հ'ու՞ր կէրթաս։

Մարդն ասեց.—Խարիբ ճանբորդ մարդ իմ, էկեր իմ կընցնիմ էրթամ Պաղդադ։

Դառցավ էկավ խալիֆին պատմեց։

Ասեց.—Վալայի, ջորի մ' է, կնիկ մարդըմ ու էրկու ճիժ, հարցուցի ուրանցնե, ասին՝ խարիբ մարդ ինք, էկեր ինք, կընցնենք էրթանք Պաղդադ։

Խալիֆեն ասեց.— Աստված լե գինա, էդի իմ էլաղասին է։

Շուտըմ կանչեց էրկու մարդ, ասեց.— Կառնեք չորս ձեռք աղեկ հալավ, մեկ ձեռք կնիկ մարդու, մեկ լե՝ իրիկ մարդու, էրկուս լե՝ ճըժու, կտանեք, զէդ մարդիք. համամլանմիշ կէնեք, կհագուք քիփըմ, կառնեք կիգաք իմ բաղի մեջ։

Աֆանդըմ, էդոնք էկան, տարան զէլաղասին ու զուր կնիկ, ճիժ, աղեկըմ համամլանմիշ էրին, առան էկան բաղի մեջ դրին։

Պաղդրդու խալիֆեն է, զէդոնք օր ճամբեց, թալալ տվեց բոռալ, քտղաք-քաղքով թափան լկան, դալ ու ղուռնեն տվեց զարկել, հ՝ելավ հ՝ընկավ ինկ էդոնց հ՝առեշ ու գնաց էլաղասու հ՝առեջ։

Գնաց էլաղասու հ՝առեջ, առավ զէլաղասին, զուր կնիկն ու էրկու ճիժ, էկավ։ Զկնիկ ու ճիժ ճամբեց տան դին, զէլաղասին առավ գնաց ուր դիվան։

Հ՝իրկուն էղավ, խալեցավ դիվան։

Խալիֆն ասեց.— Էլաղասի։

Էլաղասին ասեց.— Հրաման էրե, Պաղդրդու խալիֆա։

Ասեց.— Էլաղասի, գու իմ ախբերն իս, քու կնիկ լե իմ քուրն է, քու ճժեր լե իմ ախբոր ճրժերն ին, էդա մեկ սարեն քզիկ, մեկն՝ ընծիկ, նստի կի ու իմե, քզի քեֆ ուրախութեն էնե, բըլե քզի բանըմ ասիմ, չէղնի ա՞խ քաշիս, ախ օր քաշիս, ես կմեռնեմ։

Էլաղասին ասեց.—Զէ, դու օր սաղ մնաս, հ՝օրի՞ ա՞խ պիտի քաշիմ։

Մեկ, էրկու տարի էդպես հ՝ընցավ։

Օրըմ լե դարուն էր, էլաղասին նստուկ էր փանջարեն, օչխար թողած են դուրս, դառներ բոռբրռացին, չէ՞ քոչար էր, միտկ ընկավ ուր օչխրներն, ա՞խրմ էնեց օր սրտեն արուն էկավ։

Ախ օր քաշեց, խալիֆեն տեսավ, ասեց.—Հ՝ո՞րի ախ քաշեցիր։

Ասեց.— Հեչ։

— Զէ, վալայի, ղողորդն պիտի ասիս ընձի։

Ասեց.— Քինե պահիմ, աստծուց ի՞նչ պահեմ, քզի մալում է, օր մենք զոզնի մարդ ինք, քոչար ինք, գարուն էր, օչխար թողած են դուրս, դառներ կբրռբրռեն, միտկս ընկավ զոզան, ախ քաշեցի։

Ասեց.—Աստված զքու բան հաջողե, խի ես օչխար չունե՞մ, էլ չունե՞մ, առ քզի հազար գլուխ օչխար, հազար հատ լե կոն, գնա զոզան, հար աշուն մանցի, դառցի էկու։

Բերեց հազար գլուխ օչխար տվեց էլաղասուն, երկու-իրեք հարուր հատ լե կոն, վերցին զիրար, գացին զոզան։

Մեկ, էրկու, իրեկ տարի էդ հրմալ շարունակեցին։

Խալիֆին լե մեկ տղա կեր։

Էդոր սովորութեն ի՞նչ էր։

Լուսուն կհեծներ զուր ձին, կէրթեր նեճրութենի, հ՝իրկուն կդառնար կիգեր։

Ավուրըմ մեկ գնաց նեճրութենի, հ՝իրկուն հանգրցավ, ասեց.—Էլ չըմ կառնա քաղաք էրթա, էրթամ հ՝իջնեմ իմ հողբոր կոն։

Քշեց էկավ, հ՝ողբոր կոնի դուռ հ՝իջավ։

Էդ օր լե հարսնիք էր կոներու մեջ, էլաղասին կանչած են, տարած հարսնիք, հողբրկին ու ուր էրկու տղեն մինակ են ուրանց տուն։

Քաշեց զձին, կապեց, հաց դրեց կերավ ու տեխ փռեց պառկավ, քնավ։

Հոխբրրկին լե պառկավ կշտի հետ, էրկուս մեկտեխ քնան։

Էլաղասին, սահաթ էղավ իրեկ-չորս, հարսնիքեն էկավ։

Էկավ տեսավ օր ջրհելրմ հ'երկնցուկ է, կնկա խեչ պառկուկ։

Ասեց.— Ես էղնեմ էլաղասին, հ'իգա՞ն իմ կնկա խեչ պառկին, էլ հ'որի՞ սաղ կմնամ։

Աչքեր մթնեց, քաշեց տորանին դրեց տղի սրտին, խրոր պառեկեն տվեց դուրս։

Հ'եր օր զարկեց պառեկեն տվեց դուրս, ձեն հ'ընկավ կնկա անկաճ, հ'ելավ նստավ։

— Հա՜յ, աստված զքու տուն ավիրե, չէ էդի քու ախբոր տղեն է, հ'որի՞ զարկեցիր։

Էլաղասին ասեց.— Կնիկ, էլ փայա չէնե, ջուր գլուխ տարեր է, հ'առջին հեղ պետկ չէր էնենք, ճամբե մը հանե, իմա՞լ կէղնի։

Շիվարան, զձեռք դրին ծոցք ուրանց ու մանցին։

Ասեց.— Կնիկ, մենք ի՞նչ էնինք։

Կնիկն ասեց.—Հ'ելի, թոպրմ կտավ զարկ քու հ'անթե տակ, առ զքու թուր ու զնա պառկի մարդու շեմկըլի վրեն ասե՝ ալ ու քեֆյաթ հըմլա էղավ, էկեր եմ, դրի զիմ գլուխ քու շեմկըլին, էդա լե իմ պատանկ, զարկ՝ զիմ գլուխ, ազատիմ։

Հ'ելավ, կնկա ասածի պես, թոպրմ սպիտակ կտավ զարկեց հ'անթե տակ, կապեց զթուր վրեն ու գնաց խալիֆի շեմքի հ'առեջ պառկավ։

Աղոթրան բացվավ։ Խալիֆեն հ'ելավ դուրս, տեսավ ըռոտրմ հ'երկընցուկ ուր շեմքի հ'առեջ։ Ասեց.—Ջանըմ, դու ինս իս, չինս իս, ի՞նչ իս, պառկուկ իս հ'ոդի, աստված ղխերն էնե։

Էլաղասին ասեց.—Ախբեր, ես իմ։

— Աստված ղխերն էնե,—ասեց խալիֆեն,— դու հ'ո՞րին իս էկի, պառկի հ'ոդա։

Ասեց.— Ախբեր, ահլ ու ահվալ իմն ու քու տղեն էդա է, ես գացեր ենք հարսնիք, դառցա էկա, տեսա ջրհելրմ քու ախբրրկա մոտ պառկուկ, ասի՝ էդա ո՞րն է, քաշի զսորանին, դրի սրտին, պառեկեն տվեց դուրս։ Առեր եմ զիմ պատանկն ու զիմ թուր՝ էկի, պառկի քու շեմկըլի հ'առեջ, զարկ, զիմ գլուխ լե, ըռհաթիմ, փրթիմ ազատիմ աշխըրքի խամ ու խասավաթեն։

Խալիֆեն ասեց.—Դը հ'ելի կանի, ասի տեսնամ ի՞նչ է էղի, հ'ելի գնա, տուր, մեկրմ թըղ շալկե, տանե թալե մըշ մեջին, հ'իգա. կճամբեմ

քանի մը մարդ, էրթան փնտռին, առնեն հ'իդան, թալին հորըմ, թաղին։

Հ'ելավ գնաց, զտղեն տվեց մշկի մը պառեկ, տարավ մեշի մեջ՝ իրեկ, չորս սահաթ հեռուն տեխրմ թալեց, թողեց էկավ ու դրֆե հավարեն զարկեց, թե՝ իմ ախբոր տղեն էկեր է էդ դին նեճրուքենի, հրմկա չէրևա, հ'ելեք էրթանք, փնտռենք։

Հ'ելան գացին, փնտռեցին, գտան, բերին, էկան թաղեցին։

Աֆանդրմ, քանի մ' օր մնաց, խալիֆեն ճամբեց զէլաղասու էրկու տղեն առավ, գնաց։ Առավ գնաց, վարժապետըմ բերեց, դրեց խորոտիկ հ'օդի մեջ, ասեց.—Զէգա էրկու տղեն թասլիմ կէնիմ քզի, հրմալ կէնիս օր էղնին ֆիլ ֆիլ։

Յոթ տարի թամ էդ տղեկներ կարդացին, յոթ տարին օր խըլըսավ, թաքմիլ էղան, հ'ելան դուրս։

Բայց էլաղասին խաբար չուներ. սա՞ղ ին, թե մեռուկ ին ուր տղեկներ։

Օրըմ լե էլաղասին ու խալիֆեն նստուկ են փանջարեն, կժըղլեն։ Իշքեց դուրս ու ա՞խըմ քաշեց։

Օր ա՞խ քաշեց, խալիֆեն ասեց.— Ախբեր, ղու հ'ո՞րի ա՞խ քաշեցիր։

Ասեց.— Քինե պահիմ, աստծուց ի՞նչ պահիմ, իմ վաթան ընկեր է միակս, ախ էրեցի։

Խալիֆեն ասեց.— Ախբեր, դու էդոր հ'ապով հ'որի՞ն ախ կքաշիս, էղի շատ չաթին է, գնա լե, էկո լե. զքու ձեռք բռնող կա՞։

Աֆանդրմ, հ'ելավ խալիֆեն ձեռքի տկով զուր էրկու ախչիկ պսակեց էլաղասու էրկու տղի վրեն։ Բայց էլաղասին խաբար չուներ։

Հ'եր պսակեց զէրկու ախչիկ, փրթավ ազատավ, կանչեց զուր օտկ ու ձեռք թանբիհ էրեց, ասեց.—Ես ու էլաղասին հանդե կելնիք կբառնաք զէլաղասու տուն կէրթանք, դուք լե կառնեք զէրկու տղեն ու զէրկու ախչիկ, դոլ ու զուռնեն կզարկիք, մըր ետևեն կիգաք։ Մենե կես սահաթ հեռու կզարկեք զձըր չաղըրներ, նստիք։ Իրեկ օրն օր թըմավ, ըստ հազուն կիգաք կհասնեք մղի, կէրթանք։

Աֆանդրմ, հ'ելավ, թե հազար, էրկու հազար օչխար բռնեց էլաղասուն. բաղըրկանըմ կանչեց, զարկեց զդոլներն, հ'ընկավ հ'առեջ ու հ'ելավ քաղքեն։

Ուրանք հ'ելան քաղքեն, սահաթըմ հեռեցան, զախչիկներն ու զտըղեկներն լե մարդիկ հանեցին, էնդոնք լե դոլ ու զուռնով հ'ելան։

Իրեկ օր էդ տեսակով գացին. ախչկներու ու տղեկներու չաղըրներ կես սահաթ հեռու կզարկեն։

Իրեկ օրն օր թըմավ, առան զէրկու ախչիկն ու զէրկու տղեն, էկան, բերեցին էլաղասու մոտն ու խալիֆին։

Օր բերին, խալիֆեն վերուց էլաղասուն ասեց.—Ախբեր, կճանչընաս զէդա մարդիկ ու զէդա հարսներ։

Էլաղասին ասեց.— Չէ, վալա, ի՞նչ կճանչնամ։

Ասեց.— Ախբեր, էդա քու էրկու տղեն էդա յոթ տարի դրի դպրոց, կարդացին, զուրանց կարդմունք թաքմիլ էրին, էդա լե իմ էրկու ախչիկն է, պսակեր իմ վըր ուրանց. բարով զիրար վելին։ Աստված քու հետ էղնի, բըլե ինչ օգուտ, իմ սրտով քու աղեկութենի տրկեն չկըռցա հ՝ելնեք։

Բարեմնաց էղան հ՝իրարուց։

Խալիֆեն հեծավ զուր ձին ու հեսցուց զուր ձիավորգանք, դառցավ էկավ Պաղդաղ, ուր թախթի վրեն նստավ։

Էլաղասին լե հեծավ զուր ձին, հեսցուց զուր կնիկն, տղեկներն ու հարսներ, քշեց էկավ ուր էլի մեջ դրեց։

Ջուհապ գնաց էլին, թե՝ էլաղասին էկավ։ Հ՝ելան հ՝առեջ, տարան հ՝իջուցին։

Էնդոնք հասան ուրանց մուրազին, դուք լե հասնեք ձըր մուրազին։ Աստծուց հ՝իջավ իրեկ խնձոր. մեկ՝ ասողին, մեկ՝ լսողին, մեկ լե՝ անկաճ էնողին։